

տի պատերազմի ժամանակ կը սահմանուէին յատուկ պահողք, որոց գործն էր այդ միայն, եւ որ հարկաւ բարեպաշտութեան մէջ աւելի ծանօթ անձինք էին: Այսպէս մինչդեռ վարդանանք կը յարձակէին պարսկական ամրութեանց վրայ, մի եւ նոյն ժամանակ «աղօրակաւքն անդադար լինէին յաղօթս իւրեանց, եւ պահողքն պահէին ի պահս իւրեանց» (Եղիշ. 56), ուր յայտնի է ղերերու եւ անձանց տարբերութիւնը:

16. — Յատուկ նպատակներ: — Փաւստոս կը պատմէ Ս. Գրիգորիսի մասին՝ թէ իւր վիճակին բարեկարգութեան համար երկնային օժանդակութիւնը խնդրելու եւ իւր օրինակաւ ժողովրդեան եռանդն արծարծելու նպատակաւ, «զցայգ եւ զցերեկ պահօք եւ աղօթիւք» կ'անցնէր (13):

Կիրակոս ճգնաւորը Ս. Թադէոսի նշխարաց յայտնութեան արժանանալու տենչով՝ երեսուն օր անցուց «ի պահս պնդութեան»: Յետոյ դարձեալ մի եւ նոյն վախճանաւ կրկին կը պահէ չորս ամիս, մարերի ամսէն մինչեւ նաւասարդ (Սոփ. Ը, 89, 92):